Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 30. 08. 2022 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝ .....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Մարդու իրավունքները և ոստիկանությունը
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտության ֆակուլտետ, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Գ.Առաքելյան, safamalya@mail.ru, հեռ. 055 56 67 23
ՈՒՍ.ՏԱՐԻ/ ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	Բակալավր
ԿՐԵԴԻՏՆԵՐ	2 (երկու)

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Մարդու իրավունքները և ոստիկանությունը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 16 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը ընթերցում է գրականություն, կատարում է վերլուծական և հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ գրում է ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում՝ դիֆերենցված ստուգարքով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք» և «Միջազգային իրավունք» դասընթացների հենքի վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Մարդու իրավունքները և ոստիկանությունը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են մարդու իրավունքների ձևավորման պատմական գործընթացը, քննարկվող ոլորտի միջազգային իրավական փաստաթղթերը, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական մեխանիզմները, ինչպես նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները:
ՆՊԱՏԱԿ	Դասընթացի նպատակն է՝ սովորողներին մատուցել համապարփակ գիտելիքներ, մասնավորապես ներկայացնել՝ 1. մարդու իրավունքների ձևավորման պատմական գործընթացը, 2. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային փաստաթղթերը, 3. ՀՀ ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական փաստաթղթերը, 4. ոստիկանության համակարգում մարդու իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմները, 5. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կա-

	պակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները:
ԽՆԴԻՐՆԵՐ	Դասընթացի խնդիրներն են՝ 1. ներկայացնել մարդու իրավունքների համակարգի ձևավորման պատմական գործընթացի առանձնահատկությունները, 2. ուսումնասիրել մարդու իրավունքների ոլորտի միջազգային հիմնարար իրավական փաստաթղթերը, 3. ուսումնասիրել մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային իրավական կառուցակարգերը, 4. ուսումնասիրել ՀՀ ոստիկանության գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, 5. ուսումնասիրել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների հետ ՀՀ ոստիկանության համագործակցության առանձնահատկությունները, 6. ուսումնասիրել Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշները, 7. ուսումնասիրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 1. Իմանա՝	1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում միջազգային կոնվենցիաների կիրառման առանձնահատկությունները, 2. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում ՀՀ Սահմանադրության դերը և տեղը, 3. մարդու իրավունքների պաշտպանության խնդրում ՀՀ ոստիկանության միջազգային իրավական պարտավորությունները:

2. Կարողանա՝	1. ընկալել Սահմանադրության դերը մարդու իրավունքների համակողմանի պաշտպանության բնագավառում, 2. քննարկումներ և բանավեճեր անցկացնել մարդու իրավունքների հիմնախնդիրների, դրանց պաշտպանության իրականացման վերաբերյալ, 3. վեր հանել տարբեր կառույցներում, այդ թվում՝ ոստիկանական համակարգում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները:
3. Տիրապետի՝	1. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային կոնվենցիաների և դաշնագրերի նորմերին, 2. մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ ոստիկանության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման առանձնահատկություններին, 3. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռների բովանդակությանը:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	1. ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի, Երևան, 2009 թ.: 2. Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին, Երևան, 2008 թ.: 3. ՄԱԿ-ի մարդու իրավունքների մանդատը, Երևան, 2010 թ.: 4. Երիցյան Ա. Հ. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնահարցերը, Երևան, 2001թ.: 5. Ֆլորանս Բենուս, Ռոբեր, Հայնրիխ Կլեբես, Եվրոպայի խորհրդի իրավունք, Երևան, 2007 թ.: 6. «Ոստիկանության մասին» ՀՀօրենք, Երևան, 2002 թ.: 7. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015 թ.:

Լրացուցիչ	1. Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը, Երևան, 1995 թ.: 2. Бекяшев К.А. Международное публичное право, М., 2010: 3. Международные акты о правах человека. Сборник документов, М., 2011: 4. Международная защита прав и свобод человека. Сборник документов, М., 2007:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Դիֆերենցված ստուգարք: Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված» գնահատականների նշանակումով:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ/ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խորը և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլչ տալով, բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների, գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները, դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն	Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **Մարդու իրավունքների ձևավորման գործընթացը: Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1.Պատմական անդրադարձ մարդու իրավունքների ձևավորման բնագավառին: 2. ՄԱԿ-ը որպես մարդու իրավունքների կոնվենցիաների ընդունման հիմնարար կառույց: 3. Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը. ընդհանուր ակնարկ:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-3 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 2 **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանում: 2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի իրավական բովանդակությունը:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-2 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 3 **Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ ոստիկանության համակարգում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ ոստիկանության գործունեության սահմանադրական հենքը: 2. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: 3. ՀՀ ոստիկանության գործունեությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում: 4. ՀՀ ոստիկանության պարտավորությունները մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների առջև:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների առջև ՀՀ ոստիկանության պարտավորություններին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-4 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 4 **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի գործունեությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Գերագույն հանձնակատարի ինստիտուտի ձևավորման գործընթացը: 2. Գերագույն հանձնակատարի ինստիտուտը որպես մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ կառույց:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի առանձնահատկություններին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-2 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 5 **Մարդու իրավունքների խորհրդի և ՀՀ ոստիկանության համագործակցությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների խորհրդի ստեղծման անհրաժեշտ պայմանները: 2. Մարդու իրավունքների խորհրդի փորձագիտական օգնությունը ՀՀ ոստիկանությանը:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են մարդու իրավունքների խորհրդի կողմից ՀՀ ոստիկանությանը ցուցաբերված փորձագիտական օգնության հիմնարար ուղղություններին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-2 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 6 **Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծումը ՀՀ-ում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմեն). պատմական ակնարկ: 2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի ընդունման նախադրյալները: 3. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության կարգը և գործառույթները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են մարդու իրավունքների պաշտպանի ընտրության կարգին և գործառույթներին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-3 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 7 **Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան: ՀՀ կողմից նշված փաստաթղթի վավերացման անհրաժեշտությունը: 2. ՀՀ ոստիկանության գործունեությունը Խոշտանգումների դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի համատեքստում: 3. Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 1- ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարցեր 1-3 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 8 **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները:	Հարց 1 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները առավել մանրամասն ծանոթանում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռներին, քննարկում են խնդրահարույց հարցերը: Հարց 1 - սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Հարցաշար

«Մարդու իրավունքները և ոստիկանությունը» դասընթացի դիֆերենցված ստուգարքի

1. Պատմական անդրադարձ մարդու իրավունքների ձևավորման բնագավառին
2. ՄԱԿ-ը որպես մարդու իրավունքների կոնվենցիաների ընդունման հիմնարար կառույց
3. Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը. ընդհանուր ակնարկ
4. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանում
5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի իրավական բովանդակությունը
6. ՀՀ ոստիկանության գործունեության սահմանադրական հենքը
7. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում
8. ՀՀ ոստիկանության գործունեությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում
9. ՀՀ ոստիկանության պարտավորությունները մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների առջև
10. Գերագույն հանձնակատարի ինստիտուտի ձևավորման գործընթացը
11. Գերագույն հանձնակատարի ինստիտուտը որպես մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ կառույց
12. Մարդու իրավունքների խորհրդի ստեղծման անհրաժեշտ պայմանները
13. Մարդու իրավունքների խորհրդի փորձագիտական օգնությունը ՀՀ ոստիկանությանը
14. Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմեն). պատմական ակնարկ
15. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի ընդունման նախադրյալները
16. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության կարգը և գործառույթները
17. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան: ՀՀ կողմից նշված փաստաթղթի վավերացման անհրաժեշտությունը
18. ՀՀ ոստիկանության գործունեությունը Խոշտանգումների դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի համատեքստում
19. Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշները
20. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռները